

3830

2mykpkG

1440-ԱԿ
56

ՍԿՉՐՈՒՆՔ

Հ Ա Շ Ո Ւ Ե Մ Ա Տ Ե Ն Ի


ՀԱՄԱՌՕՏԵԱԿ ԱՇԽԱՐՀԱԲԱՌԻ Ի ՊԵՏՍ ԿՈՐԱԿԱՐԺԻՑ

2004

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆ ՍՐԲՈՅ ՂԱԶԱՐՈՒ

1830



657
U-57

1880

4 3 2 1 0 9 8 7 6 5 4 3 2 1 0

U.S. DEPARTMENT OF THE INTERIOR

1880

U.S. DEPARTMENT OF THE INTERIOR

U.S. DEPARTMENT OF THE INTERIOR

1880

պր.

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

Ա Վճառականութեան առաջնորդը և կառավարը Հաշուեգիրքն է որ մարդուն ունեցած ապրանքը, ըստակը, առածը տվածը կիմացնէ, մուցածները միտք կրճդէ, ու ընելիքը առջևը դնելով մտամտալ կուտայ աղէկ ընելու: Այլ որովհետև մեր ազգին մէջ շատ մարդիկ կը գտնուին որ առուտորի փափաք ունին, ու զեցինք աշխարհաբար լեզուով պզտիկ գիրք մը շինել, որով նորավարժները կարենան սորվիլ Հաշուեգիրք բանեցնելու կարգը և կանոնը: (Ո)Նպէտ այս գրքիս համառօտութիւնը չի կրնար հարկաւոր բաներուն ամէնը սորվեցնել, սակայն կրնայ լոյս մը տալ նորավարժներուն, ու ընդհանրապէս մտքերնին բանալ, թէ առուտորի մէջ ի՞նչ կարգ ու կանոն պահելու է. և թէ Հաշուեգիրքը, որ վաճառականաց գլխաւոր գործիքն է, ի՞նչ պէս պիտոր բանեցվի:

Այս ընդարձակ գիտութեան մէջ սորվելու բաներ շատ ըլլալով, կը յորդորենք զնորավարժները, որ զայս համառօտութիւնը միտք առնելէն ետքը, կարդան մէկալ Հաշուեգիրքը, որ կըսվի Արկնատումար վաճառականութեան. ուր երկայն բարակ

1998

գրված են ամենայն հարկաւոր և օգտակար եղածները այս գիտութեանս: **(Թ)** Կէս
անիկայ գրաբառ է, սակայն երկուքն ալ մի և նոյն կարգը ու կանոնը ըլլալով, զայս
սորվողը զայն ալ դիւրաւ և առանց աշխատութեան կիմանայ: **(Ա)** սն զի այս գիտու-
թեան կամ հաշուեգրքին դժուարութիւնը՝ կարգը իմանալն է, եթէ նորավարժին
խելքը անգամ մը հասնի նէ, ինքնիրեն կրնայ չիկարդացած բաներն ալ կարդի մէջ
դնել. հերթիք է որ ունենայ փափաք սորվելու, և համբերութիւն առանց ձանձրու-
թեան սորվածները բանեցնելու:

(Բ) Ես գրքիս մէջ նայեցանք որ բաց 'ի աշխարհաբառ և համառօտ ըլլալէն, դնենք
պարզ օրինակներ, որպէս զի նոր սորվողը նեղութիւն չլքաշէ, այլ դիւրաւ հասկնայ,
ու ինքն ալ կարենայ սորվածները ընել: **(Ա)** ստի կըյորդորենք զնորավարժը, որ այս
գրքին կարգը և կանոնները միտք առնելէն ետքը, ինքիրմէ նոր նոր օրինակներով հա-
շուեգիրք մը գրէ. անանկ սեպելով՝ իբրև թէ ձեռք զարկերէ առուտրի, ու առածը
տվածը կընշանէ: **(Գ)** այս ընելով՝ միտքը կըբացվի ու պայծառ կիմանայ կարդացա-
ծը, և տարակոյս մալ ունի նէ՝ գրելու ատենը ինքիրմէ կըգտնէ ու միտքը կըհանգչի:

(Դ) ուսանք թէ այս փոքր աշխատանքիս պտուղը մեծապէս տեսնենք բարեսիրտ
կարդացողներուն վրայ, որոց օգուտը շարժեց զմեզ ձեռք զարնելու և կատարելու
'ի փառս **(Ե)**:

Հ Ա Շ Ո Ւ Ե Գ Ի Ր Վ

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

ՀԱՐԿԱԼՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

iii. **Ա** ճառականութեան փափաք ունեցողը պիտտ առաջ գիտնալու է, թէ ինչ է առուտուրը, ծախելը և ծախու առնելը ինչպէս կրլայ, որ ապրանքը վաստակ կրբերէ և որը փնաս, և թէ ինչ ճամբով պիտոր խմանայ առածին և տվածին շահը կամ փնասը: Օստոնք չիկրնար աղէկ գիտնալ ինչ վան որ քիչ մը ատեն վաճառականի մը քով աչկերտութիւն ըրած չըլլայ նէ:

բ. Առուտրի ձեռք զարնողը պիտի վարժ ըլլայ աղէկ գիր գրելու, անխալ հաշիւ ընելու, առածին տվածին վրայ արթուն կենալու. ինչվան մանր ստակը զանց առնելու չէ, վասն զի մեծ փնասը մանրէն կրսկսի, ու պզտի անհոգութիւնը ծանր վէն կրբերէ առուտրին:

գ. Թի որ մէկը իր առուտրին հաշիւը չիգիտնայ, եղած փնասին դեղ չիկրնար ընել, և ոչ յաջողութեան ծայրը կրնայ բերել. այլ կրլայ նման արէկոծեալ նաւու մը, որ առանց դէկի չունի ապահովութիւն և յոյս անվտանգ հասնելու նաւահանգիստը, վասն զի չունի կանոն և կառավար տուրեւառութեան՝ հաշուէ գիրքը, որ յաջող և կամ ձախող դիպուածներու մէջ կըլտկէ առուտրին ճամբան, ու անփնաս կըմնայ:

դ. Որպէս զի առուտուրը կարգաւորեալ ըլլայ՝ պէտք է որ վաճառականը ամէն օրվան առածը տվածը երկան բարակ գրէ տետրակի մը մէջ. ամէն բան իր անունովը, տեղովը, առած կամ տված ապրանքին ինչ ըլլալը, համրանքը, կէռքը, ինչ ստակ վաճարելը՝ ոսկի կամ արծաթ, ինչ գնով ծախելը կամ ծախու

առնելը և կամ ապրանք ապրանքի հետ փոխելը. նմանապէս պատճառը ծախելուն կամ ծախու առնելուն և փոխոց ընելուն: Ասոնցմէ՛ ՚ի զատ ըրած առուտրին պատճառաւ եղած խարճը, մաքսը, նաւողէքը, բեռնակրի վարձը, և այլն: Աս տետրակին անուներ կրսվի Յիշատակարան. որպէս թէ յիշեցնող կամ վաճառականին միտքը ձգող ամմէն օրվան եղած առուտրները (1):

Ե. Յիշատակարան տետրակէն ՚ի զատ պիտոր ունենայ երկու գլխաւոր հաշուեգիրք ալ, որ կրսվին ()ըհաշիւ և Սայրհաշիւ: Աս երկու գիրքը պիտի սեպէ վաճառականը իբրև թէ իր երկու ձեռքը կամ երկու աչքը. անանկ որ՝ առանց ասոնց ամենևին բան չիկրնար տեսնել առուտրի մէջ:

Չ. ()ըհաշիւ գրքին բաները պիտի ժողվին Յիշատակարան ըսված տետրակէն, բայց մասնաւոր կարգաւ և կանոնով, զոր կըսորվեցնենք ետքը (ի): Իսկ Սայրհաշիւ գրքին բաները օրհաշիւ գրքէն ժողվելու է մէկիկ մէկիկ, ու ամմէն մէկ ապրանքին հաշիւը առանձին երեսներու մէջ նշանելու է, անանկ որ՝ ինչ և իցէ ապրանք էրբ ծախու առերես, ու ետևէ ետև ինչ որ ծախերես, և ինչ վաստակ կամ վնաս ըրերես, ամմէննալ կերևնան իրենց երեսներուն մէջը: Աս գրքին կարգը և կանոնը սորվեցնենք ()ըհաշիւ գրքին կանոններէն ետև (իթ):

Դ. (1) Երևելի վաճառականները, որ շատ տեսակ առուտրի մէջ են, յիշատակարան տետրակին տեղը կըբանեցնեն բանի մը առանձին գրքեր կամ տետրակներ, որոնց մէջը կընշանեն ամմեծօրվան ըրած առուտրին: Թէ որ մէկին ըստակ տալու՝ կամ մէկէն ըստակ առնելու ըլլան, կըգրեն առանձին տետրակի մը մէջ, որ կըսվի Տետրակ սնգիկ: Թէ որ ապրանք ծախու առնեն՝ կընշանեն ուրիշ տետրակի մէջ, որ կըսվի՝ ծախու առնը ված ապրանքներու տետրակ: Ամանապէս եթէ բան մը ծախելու ըլլան, կըգրեն զատ տետրակի մէջ, որ կըսվի՝ ծախված ապրանքներու տետրակ: Թէ որ մէկին հետ թղթակցութիւն ունին առնելիքի կամ տալիքի և կամ ապրանք ապսպրելու, կընշանեն ուրիշ տետրակներու մէջ, որ կըսվի Տետրակ թղթակ.

ցութեան կամ տետրակ յանձնարարութեան: Ասոնց նման խաւնութի և տան խորճերուն համար ալ ունին առանձին առանձին տետրակներ. ուր կըգրեն օրէ օր ըրած խորճերնին, և ետքը շաբաթէ շաբաթ կամ երկու օրն անգամ մը ամմէն տետրակէն կըժողվեն օրհաշիւ գրքին մէջ գրելիքները:

Աս տետրակներուն վրայով գիտնալու բաները կընաս տեսնել կրկնատուտար գրքին մէջ, ուր տեղն ՚ի տեղը երկան գրված է իրենց գործածութեան կարգը: Ուստի աս համառօտ գրքիս մէջը չուղեցինք գնել զանոնք, որ նոր սորվողներուն շփոթութիւն չըլլայ. մասնաւանգ որ պղտիկ առուտուր ունեցողին ալ հարկաւոր բան չէ:

Որպէս զի նորավարժները աղէկ իմանան վերի ըսածները, առաջ խօսինք չիշատակարան տետրակին մէջ գրելու բաներուն վրայ. ետքը զան գրվածները անցունենք ()ըհաշիւ գրքին մէջ. ու անկէց ալ նոյն բաները անցունենք Մայրհաշիւ ըսված գիրքը :

Յ Ի Ը Լ Տ Ը Կ Ը Բ Ը Կ

Է. Դնենք թէ ձեռք ունիս Գրամագլուխ (սերմայէ) մը 20,000, $\overline{72}$ ի, ու աս տարի՝ 1830, Յունվարի 1. զան ստակը դնելով սնդուկդ, կուզես ձեռք զարնել առուտորի, յիշատակարան տետրակին սկիզբը գրէ այսպէս :

1830. ՅՈՒՆՎԱՐ. 1 :

Ես (այս անուն), ըլլալով տէր 20,000, $\overline{72}$ ի, որ է իմ յատուկ Գրամագլուխս և արդար վաստակս, ու զեցի մինակ՝ ես ինծի (կամ ընկերով, թէ որ ունիս) ձեռք զարնել առուտորի, ուստի այսօր ունեցած դրամագլուխս, այսինքն՝ 10,000, $\overline{72}$ ձերմակ ստակ, և (այսչափ) ոսկի, որ կընէ նոյնպէս՝ 10,000, $\overline{72}$, և ամէնը մէկտեղ, 20,000, գրի սնդուկը, յուսալով և ապաւինելով անձային աջողութեանը :

Ը. Դնենք թէ Յունվարի 2. աղէկ ապրանք մը ձեռք ձգելով՝ ծախու առի, յիշատակարանին մէջ գրելու է այսպէս :

1830. ՅՈՒՆՎԱՐ. 2 :

Այսօր (այս անուն պարունէն) ծախու առի սնդուկ մը ազնիւ շաքար հավանայի, կէսը գլուխ և կէսը ջարդած (կամ բոլորը ծեծած) : Մնդուկը կըւեց 1050, հօխայ, յիսունը սեպեցինք տարայի, քնացած հա-

զարը շաքարի : Լ՛մեն մէկ հօխան թէպէտ դաշնադրեցինք 3, ական ՊՊով, որ բոլորին գումարը կընէ ՊՊ, 3000 : —, սակայն պատրաստ ստակ տալուս պատճառաւ՝ իջեցուցի 2 %, (այսինքն՝ հարիւրին երկուք) ու վճարեցի ՊՊ, 2940 :

Լ՛ուած շաքարս մ[թերանոցը (մաղաղան) դնելու ատեն՝ պարպեցի մնդկէն ու նորէն կշռելով՝ մնդկին տարան գտայ 40, հօխայ, և շաքարը 1010, հօխայ, որով ունեցայ 30, ՊՊ շահ. ուստի բուն ապրանքը եղաւ ինծի ՊՊ 2910 : —

Լ՛ս ապրանքին վրայ եղած խարճը, Լ՛եռնակիր 10 : —
Սըտողէք 5 : —

Բոլոր գինը պիտոր սեպվի . ՊՊ 2925 : —

Թ . Սըհանդիպի երբեմն որ տարան պակաս գալու տեղը աւելի կըլլայ, որ զէն է ծախու առնողին . ուստի պիտոր Զանայ իր փնասը իմացնել ծախողին ու կտրել զգինը, թէ չէ՝ կըհարկաւորի զպակասը զարնել ապրանքին գնոյն վրայ, ու սեպել թէ աւելի սուղ առած է զան ապրանքը :

Ժ . Ս՝ աճառականութեան նորավարժը աղէկ պիտի գիտնայ, թէ առուտրին մեծ շահը ծախու առնելու ատենն է քան թէ ծախելու . անոր համար պէտք է աղէկ աչքաբացու թիւն ընել որ աժան ու վաստը կով առնու :

Ժն . Վանքը թէ Յունվարի 5, աջողեցաւ նոր առուտուր մը, յիշատակարանին մէջ գրելու է այսպէս :

1830 . ՅՈՒՆՎԱՐ . 5 :

Լ՛սյօր ծախու առի (այս անուն պարոնէն) 2000, հօխայ դահվէ Լ՛գիպտոսի, մաքուր ապրանք ըլլալով առանց տարայի : Վինը թէպէտ 4, ՊՊով կըտրած էինք, որ ամմէնը պիտի ընէր ՊՊ, 8000, բայց ես պատ .

բաստ ու աղէկ ստակ խոստանալուս համար՝ իջեցուցի 4 %, (այսինքն՝ հարիւրին չորս) ու վճարեցի 7680:—
 Վարանքիս պատճառաւ եղած խարճին կշռողէքը տվաւ ծախսողը, սակայն բեռնակրին ես
 վճարեցի 20:—

Վարանքին արժէքը . 7700:—

Պիտի գիտնաս որ՝ աս պարանքին մէջ ծախու առնելուդ ատենը ունեցար վաստակ մը 320, 770ի . զոր
 թէ 7700, 7700ը վաճ ու խարճած ըստկիդ վրայ զարնելու ըլլաս, ապրանքը կըսեպվի քեզի . 8020:—

Ժք . Վնենք թէ Յունվարի 10, աջողեցաւ քեզի ծախել 200, հոխայ շաքար, յիշատակարանին մէջ
 գրելու է այսպէս :

1830 . ՅՈՒՆՎԱՐ . 10 :

Նյսօր ծախեցի (այս անոան պարոնին) 200, հոխայ շաքար, գինը 5, 770, 60, ստակ . բոլորը կտրեց 770,
 700, զոր պիտի վճարէ ու թը օրէն . այսինքն, Յունվարի, 18 :

Ժք . Վնենք թէ Յունվարի 15, նոր առուտուր մը ըրիր, յիշատակարանին մէջը գրէ այսպէս :

1830 . ՅՈՒՆՎԱՐ . 15 :

Նյսօր ծախեցի (այս անոան պարոնին) 1000, հոխայ գահվէ, գին դնելով հոխային 4, 770, 60, ստակ :
 Եւ որովհետեւ նոյն Պարոնը ունէր իր քովը ծախու կտաւ, զոր կուզէր գահվէին տեղը տալ ինծի, ուստի
 աս գաշն ալ գրի հետը, որ առած գահվէին կէս գինը մէկէն վճարէ պատրաստ ըստկով, ու մէկալ կէսին
 համար ալ տայ ինծի 100, ծրար (Թօփ) կտաւ :

Չախած գահվելիս գինը՝ 4, $\overline{70}$, 60 • ստակէն՝ առի իրմէ 500, հօխային համար . . . $\overline{70}$ 2250 : —
 Դնծի տված 100, ծրար կտաւին գինը . ամէն մէկին 22, $\overline{70}$, 60, ստակ սեպելով, ըրաւ . . . 2250 : —
 Իւրորին գումարը . $\overline{70}$ 4500 : —

ԺԴ. Գնենք թէ Զոնվարի 18, առի ծախած շաքարիդ ստակը, գրէ յիշատակարանին մէջ այսպէս :
 1830. ՅՈՒՆՎԱՐ . 18 :

Լ. յօր (այս անուն պարոնը), որ ամոյս 10ին առերէր ինծմէ 200, հօխայ շաքար, և ունէր պարտք 700,
 $\overline{70}$ ի, տվաւ ինծի ճերմակ ստակ . $\overline{70}$ 400 : —
 Իսկի վէնէտ՝ . 10 . որ ըրաւ . . . 300 : —
 $\overline{70}$ 700 : —

ԺԵ. Իեպէնք թէ Զոնվարի 20, ծախու առի 100, ծրար թաշկինակ, յիշատակարանին մէջ գրելու է :
 1830. ՅՈՒՆՎԱՐ . 20 :

Լ. յօր ծախու առի (այս անուն պարոնէն) 100, ծրար ազնիւ թաշկինակ հնտու, 50ը ճերմակախառն
 կարմիր գունով, և 50ը կապտագոյն ու խոշորկէկ քան զառջինը : Լ. մէննալ մէկ մէկու վրայ նոյն գնով
 ծրարը 30, $\overline{70}$, բոլորին գինը ըրաւ՝ $\overline{70}$ 3000 : —

Լ. ըստկին կէսը՝ առած ատենըս վճարեցի . . . 1500 : —

Իսկ մէկալ կէսը՝ խոստացայ ամսուս 30ին վճարել . $\overline{70}$ 1500 : —

Իւրորին գինը . $\overline{70}$ 3000 : —

ԺԿ. Սեպտեմբ Թէ Հոնովարի 25, նոր առուտուր մը ըրիր. յիշատակարանին մէջ գրելու է այսպէս:

1830. ՅՈՒՆՎԱՐ. 25:

Մ. յօր (այս անուն պարոնէն) ծախու առի 20, զամբիւղ (զէմպիլ) բրինձ Լգրիպտոսի, ամմէն մէկ զամբիւղը 150, հօխայ, որ բոլորը կընէ 3000, հօխայ: Մ. մմէնուն տարան մէկ տեղ վար զարնելով, որ էր 100, հօխայ, մնաց մաքուրը 2900: Մ. մմէն մէկ հօխային գինը դաշնագրելով 60, ստակ, բոլորին գումարը ըրաւ՝ 1450: —

Մ ստակը ուղեւով մէկէն վճարել, կտրեցի 50, 120ը, իմ վրաս առնելով զամմէն խարճը, ուստի վճարեցի իրեն 1400: —

Իսկ եղած խարճը, Աշուղէք 15: —

Բեռնակրի 18: —

Բոլորին գինը . 1433: —

ԺԷ. Սեպտեմբ Թէ Հոնովարի, 28, առուտուր մը ըրիր կէսը ստկով և կէսը փոխոցով, յիշատակարանին մէջ գրէ այսպէս:

1830. ՅՈՒՆՎԱՐ. 28:

Մ. յօր ունեցած բրինձ ապրանքիս մէկ զամբիւղը այսինքն 150, հօխայն ծախեցի (այս անուն պարոնէն), հօխայն 90, ստկով. ու գինը առի 112:60

Լաքը նոյն Պարոնը ուղեւով 150, հօխայ բրինձ ալ ապրանքի հետ փոխել, առի իրմէ 60, կապ

(Թօփ) Թուղթ հասարակ, ամմէն մէկին գին կտրելով 2, 70, Թէպէտ կընէր բուրը 120, 70, բայց էս սեպեցի 70 112:60
Առաժ Թղթիս խարճը բեռնակրի համար 3:—
<u>Թղթին արժէքը . 115:60</u>

ժը. Աեպենք Թէ Յունվարի 30, նոր առուտուր մը ըրիր. յիշատակարանին մէջ գրելու է այսպէս:

1830. ՅՈՒՆՎԱՐ. 30:

Այսօր ծախեցի (այս անուն պարոնին) 600, հօխայ շաքար, ամմէն մէկ հօխայն 3, 70, 60, ստկով, ու առի իրմէ 70, Մաճառ ոսկի՝ երեսնական 70ով, որ կընէ ամմէնը 70. 2100:—

Այսօր վճարեցի (այս անուն պարոնին) 70, 1500, ինչպէս խոստացերէի իրեն ամնոյս 20ին ծախու առաժ Թաշկինակներուս կէս գնոյն համար:

ԺԹ. Ա էրի տված օրինակներս յուսամ Թէ նորավարժներուն կրնայ ըլլալ բաւական լոյս մը տեսնելու, Թէ օր առուր ըրած առուտրնին ինչպէս նշանելու են յիշատակարան ըսված տետրակին մէջը: Հիմա սորվեցնենք ()ըհաշիւ գրքին բաները:

Օ Ր Տ Ե Շ Ի Ի

Դ. () րհաշիւը պիտի ըլլայ զատ ու առանձին գիրք մը, և երեսները բաժնակերպ է վարի գրված օրինակին ձևովը : Չախակողմը պիտոր ունենայ լայն լուսանցք, ուր կընշանվի Սայրհաշիւ գրքին թղթահամարները : Իսկ աջակողմը զծելու է երկու գաւազան, մէկը ՊՊի համար, և մէկալը մանր ըստկի : Ըմտուն օրը կըդրվի վերնագրի պէս ամմէն օրվան գրելու բաներուն գլուխը կամ վրան :

Իս. Ըս գրքին թղթահամարները դնելու է կարգաւ ետեւէ ետեւ՝ 1. 2. 3. 4. և այլն : Ու ամմէն երեսին ճակատը պիտի գրվի աս բառը () րհաշիւ . ու անոր ներքեւը կըդրվի տարին և քաղքին անունը, ուր կըլլայ առուտուրը : Ետքը դնելու է ամիսը և օրը, որոնց ետեւէ կուգայ առուտրին խօսքերը :

Իք. () րհաշիւ և Սայրհաշիւ գրքերուն մէջ զինչ և իցէ ըստկի համարնք երկու անգամ պիտոր գրվի, մէկ մը ներսը բանին մէջ, և մէյմալ դուրս ըստկի գաւազանին մէջ, ինչպէս պիտի տեսնես ետեւի օրինակդ : Սակայն աղէկ նայելու է որ ինչ տեսակ ըստկով սկսերես հաշուեգիրքդ, նոյն ըստկին հաշիւը միշտ բանեցնես, չըլլայ թէ երբեմն ՊՊով գրես, երբեմն Ֆիւանդով կամ Ֆիօրինով, որոնց գինը և արժէքը այլ և այլ ըլլալով մեծ շփոթութիւն կուտան հաշուեգիրդ :

Իդ. Որպէս զի օրհաշիւ գրքին կարգը կարենաս իմանալ, պիտի գիտնաս ընդհանրապէս . թէ ամմէն առուտրի մէջ որուն վրայ ըստակ կամ ապրանք մը պառկի, ան մարդը կամ տեղը կամ ապրանքը պարտուկան պիտոր սեպվի, և ըստկին ելած տեղը՝ առնելիքի տէր : Օ որ օրինակ ըսենք թէ առուտրի համար 20000, ՊՊ գրիր սնդուկը, պիտի սեպես թէ սնդուկը պարտական է քեզի, և դուն առնելիքի տէր : Գնենք թէ նոյն ըստակը ելաւ սնդկէն ու ապրանքի վրայ պառկեցաւ, ան ատեն ապրանքը պարտկան կըլլայ սնդկին . և սնդուկը առնելիքի տէր : Զետոյ սեպենք թէ առած ապրանքդ ծախվեցաւ ու ըստակը նորէն սնդուկը մտաւ, ապրանքը կըլլայ առնելիքի տէր, և սնդուկը պարտկան : Կամ թէ ըսենք, առած ապրանքդ փոխոց ըրիր ուրիշ ապրանքի հետ, ետքի առածդ պարտկան կըլլայ առջի ապրանքին, որուն գնովը ծախու առնվեցաւ ետքինը : Ըսոնց նման ամմէն առուտրի մէջ աս կարգը պիտոր պահվի :

իդ. Սերի դրածիս միտքը աղէկ իմացնելու համար դնենք աս տեղը յիշատակարանին առջի օրինակը (Թիւ. Է). ու ցուցնենք թէ ինչպէս անցնելու է օրհաշիւ գրքին մէջ, որով կրնայ իմացվիլ մէկալընց կարգնալ:

իե. Որովհետեւ հաշուեգրքին մէջ պիտտ առաջ նշանելու բանը վաճառականին Վարամագլուխն է, անոր համար ունեցած 20,000, 70 ըստակդ, որ դրիւ սնդուկը, պիտի սեպես Ղոնեւիքի տէր, և զսնդուկը Պարտկան Վարամագլխոյդ (որ ըսել է քեզի): Ուստի զաս բանը համառօտ ճամբով մը նշանելու համար սովորու թիւն է օրհաշիւ գրքին մէջ գրել այսպէս: * Մնդուկ առ Վարամագլուխ 70, 20,000, զոր այսօր դրի առուտրի համար 70 20,000: —
 Ըս բանը ըսել է, թէ սնդուկը պարտկան է և գրամագլուխդ առնելիքի տէր քսան հազար 70ի:

իզ. Վորավարժները պիտի գիտնան, թէ հաշուեգրքերու մէջ պարտկանը միշտ առաջ յիշվելու է քան զառնելիքին տէրը. ուստի աս պատճառին համար կը գրվի * Մնդուկ առ Վարամագլուխ ||, իբր թէ առջինը պարտկան է ետեւինին: Ըսոր նման գրվելու են ուրիշ պարանքներուն ալ, նաև մարդկանց՝ որ մէկ մէկու հետ առուտուր մը ունին: Իսկ թէ պարտկանը և առնելիքի տէրը ուր տեղ գրված են նէ Մայրհաշիւ գրքին մէջ, ձխսակողմի լուսանցքին թուերը կը ցուցնեն. գծին վերի թիւը պարտկանին է, և վարինը առնելիք ունեցողին:

իէ. Ըմմէն օրվան առածդ և տվածդ նշանելու ատեն օրհաշուին մէջը, պէտք է համառօտիւ յիշել առուտրիդ պատճառն ալ, ինչպէս կը տեսնես ետեւի դրված օրինակներէն. զոր քաղելով վերի յիշատակարան տետրակէն կը դնենք աս տեղը. որպէս զի տեսնես՝ թէ ինչ կարգաւ, ձևով և կանոնով կը գրվին օրհաշիւ գրքին մէջ:

(1)

Օ Ր Հ Ա Շ Ի Ի

1830. ԻԶՄԻՐ :

		ՅՈՒՆՎԱՐ. 1: (1)	Պ	—
—1				
2—	Մնգուկ . . Աս. Դրամագլուխն՝	Պ 20000, զոր այսօր դրել տուրևառութեան համար	20000	—
		ՅՈՒՆՎԱՐ. 2: (2)		
—3	Շաբարին ապրանքը . . Աս. սնդուկը՝	Պ 2940, որ է դին 1010, հօխայ շաբարին, զոր ծախու առի		
1—	հօխայն 3, Պով: Ամենուս գումարը	թէպէա կընէր 3030, Պ, սակայն քիչ մը տարայէն վաստկելով,	2940	—
	2 % րն վար զարնելով վճարեցի			
—3	Նոյն Ապրանքը . . Աս. նոյն սնդուկը.	Պ 15. առած ապրանքիս խարճը	15	—
1—				
		ՅՈՒՆՎԱՐ. 5: (3)		
—4	Գահվէին ապրանքը . . Աս. սնդուկը՝	Պ 7680, որ է դին 2000, հօխայ ծախու առած գահվէիս :		
1—	Հօխայն թէպէա 4, Պով գաշնադրերէի,	բայց մէկէն վճարելովս պակսեցուցի 4 % րն, ու համրեցի :	7680	—
—4	Նոյն Ապրանքը . . Աս. նոյն սնդուկը՝	Պ. 20. առած ապրանքիս խարճին համար	20	—
1—				
		ՅՈՒՆՎԱՐ. 10: (4)		
—5	(Այս սեննէ գարն) . . Աս. շաբարին ապրանքը՝	Պ 700, որ է դին 200, հօխայ ծախու առած շա-		
3—	բարին. հօխայն 3, Պ. 60. ստակ. և խոտացաւ	վճարել ամսոյս 18ին	700	—

Գիտելի: Օրհնաշուին բաները որովհետև Յիշատակարան տեսարակէն կըժողկենք, անոր համար ամեն օրվան ամսոյն քով մանր թուով մը կիմացընենք ստուգը յիշատակարանին թուա-

նշանները. որպէսզի նորավարժը երթայ նայի անտեղի գրած ներքը, ու բաղդատէ վերի գրվածներուն հետ :
 (1) Թիւ. է: (2) Թիւ. շ: (3) Թիւ. ժն: (4) Թիւ. ժբ:

1830. ԻԶՄԻՐ:

		Պ	Գրք:
ՅՈՒՆՎԱՐ . 15 : (5)			
— 1	Մնգուկ . . Աս. դահլէին ապրանքը՝	2250.	որ է կէս դինը 1000 . հօխայ դահլէին զոր ծախեցի
4—	(այս անուն գործին), հօխայն 4, Պ, 60, սակով, Թէպէտ բոլոր 1000, հօխայն կընէր 4500, Պ . սակայն կէսին համար կտաւ առի, և կէսին ստակ	2250	
— 6	Կտաւին ապրանքը . . Աս. դահլէին ապրանքը Պ, 2250, զոր (այս անուն գործին) հետ փոխոց ըրի, տալով իրեն 500, հօխայ դահլէ . և առնելով 100, ծրար կտաւ : Ամէն մէկ ծրարը Պ . 22 . ստակ 60 . բոլորը մէկտեղ	2250	
ՅՈՒՆՎԱՐ . 18 : (6)			
— 1	Մնգուկ . . Աս. (այս անուն գործին) Պ, 700 :— որ է դին 200 . հօխայ շաքարին . զոր ամսոյս 10ին .		
5—	ծախու առաւ ինծմէ, և այսօր վճարեց	700	
ՅՈՒՆՎԱՐ . 20 . (7)			
— 7	Թաշկինակին ապրանքը . . Աս. մնգուկը՝ Պ 1500. որ է կէս դինը 100, ծրար Հնտու Թաշկինակ ներուն . զոր ծախու առի (այս անուն գործին) : Ամէն մէկ ծրարը 30, Պէն, Թէպէտ բոլորը կընէր		
1—	3000, Պ, սակայն կէսը խոստացայ վճարել ամսոյս 3օին, և կէսը ավել այսօր	1500	

Յիշատակարան, (5) Թիւ. ԺԳ: (6) Թիւ. ԺԴ, (7) Թիւ. ԺԷ:

(3)

Օ Ր Հ Ա Շ Ի Ի

1830. ԻԶՄԻՐ :

ՅՈՒՆՎԱՄ. 25: (8)

-8		
1-	Բրնձին արանքը . . Աս սնդուկը՝ 7Չ 1400, որ է գինը 2900, հոխայ բրնձին, զոր ծախու առի (այս սնունդ գարնին) դաշնագրելով 60, ստակ հոխային: Բողորին դումարը Թէպէտ կընէր 1450, 7Չ, սա կայն կըտողէքը և բեռնակրի խարճը վրաս առնելով, վճարեցի	1400
-8		
1-	Նոյն արանքը . . Աս սնդուկը՝ 7Չ, 33. եղած խարճերուն համար	33

7Չ	արեւ
1400	—
33	—

ՅՈՒՆՎԱՄ. 28: (9)

-1		
8-	Սնդուկը . . Աս բրնձին արանքը՝ 7Չ, 112: 60 որ է գին 150, հոխայ բրնձին, զոր ծախեցի այսօր (այս սնունդ գարնին), հոխայն 90, սակով	112 60
-9		
8-	Թղթին արանքը . . Աս բրնձին արանքը 7Չ, 112: 60 որ է գին 150, հոխայ բրնձի զոր փոխոց բրնձի (այս գարնին հէք), ու տեղը առի 60, կապոց Թուղթ հասարակ: Ամէն մէկ կապոցը 2, 7Չ, գնելով Թէպէտ կընէր 120, 7Չ, սակայն էս սեպեցի	112 60
-9		
1-	Նոյն արանքը . . Աս սնդուկը՝ 7Չ, 3. եղած խարճին համար	3

112	60
112	60
3	—

ՅՈՒՆՎԱՄ. 30: (10)

-1		
3-	Սնդուկը . . Աս շաքարին արանքը՝ 7Չ, 2100: — որ է գինը 600, հոխայ շաքարին զոր ծախեցի՝ 3, 7Չ, 60, ստակ, և առի	2100
-7		
1-	Թաշկինակին արանքը . . Աս սնդուկը՝ 7Չ, 1500, որ է կէս գինը առած արանքիս զոր ամսոյս 20ին, խոստացրելի այսօր վճարել	1500

2100	—
1500	—

ՅԷՀասակարան. (8) Թ.Է. Ժ: (9) Թ.Է. Ժ: (10) Թ.Է. Ժ:

Ի՞նչ . () օրհանուին կարգը կանոնը հասկըցնելէն ետքը , խօսինք հիմա Սայրհաշիւ ըսված գրքին վրայ , օրպէս զի նորավարժը դիտնայ օրհանուէն յետոյ ինչ ընելիքը :

Մ Ա Յ Ր Հ Ա Շ Ի Ի

Ի՞նչ . Աս գիրքը որ պիտի ըլլայ վաճառականին իբրև թէ հայլի մը , ուր տեսնէ որոշ որոշ ամէն մէկ ապրանքին ըրած առուտուրը , որ օրհանուին մէջ էտև առաջ կը գրվին . անոր համար պէտք է աղէկ աչքաբացութիւն ունենալ , որպէս զի ամէն բան կարգաւ և անսխալ ժողովէ ու իրենց տեղը նշանէ :

Ը . Սայրհաշիւը պիտոր ըլլայ օրհանուին պէս զատ ու առանձին գիրք մը , նոյն չափով և նոյն մեծութեամբ կամ հաստութեամբ : Երեսները բաժնվելու է էտևի գրված օրինակիդ պէս : Երկու երեսը դիմացէ դիմաց մէկ մարդու՝ կամ մէկ ապրանքի հաշիւը պիտոր գրվի . ուստի երկուքին թղթահամարն ալ նոյն թիւը ըլլալու է այսպէս . 1 . 1 : 2 . 2 : 3 . 3 : և այլն : Չախակողմի երեսը պարտքը գրելու է , իսկ աջակողմինը՝ առնելիքը : Երկու երեսին վերի կողմը՝ կամ երկուքին մէջ տեղը դնելու է մարդուն կամ ապրանքին անունը . որով կերևնայ թէ ան երեսներուն հաշիւը մէկին է : Չախակողմեան երեսը որովհետև տև պարտքը պիտոր գրվի , անոր համար ՊՇԻն ու մանր ըստիկին գաւազանին վրայ գրելու է աս բառը , Տալիք : Իսկ աջակողմի երեսն որ առնելիքներուն է , պիտի գրվի Առնելիք բառը : Ասանկ ըլլալով կիմացվի , թէ վերի գրված ապրանքը կամ մարդը տալիք ունի ասոր՝ անոր , և առնելիք ունի ասկէց՝ անկէց : Ուստի սովորութիւն է մայրհաշուին մէջ գրվելու խօսքերը Տալիք և Առնելիք բառերուն յարմարցնելով՝ ըսել տալիքին կողմը կամ երեսը , այսպէս . * Առ Գրամագլուխն : Առ Սնդուկը : Առ Շաքարին ապրանքը : Առ Ատաւին ապրանքը || և այլն : Իսկ առնելիքին երեսը՝ այսպէս . * Մնդկէն : Շաքարին ապրանքէն : Ատաւին ապրանքէն : (Այս անուն) պարոնէն || , և այլն : Ինչպէս կը տեսնես վարի օրինակները :

Ըս . Աս գրքիս մէջ տարին և ամսոյն օրը կամ թիւը պիտի գրվի լուսանցքը . տալիքին իր երեսինը և առնելիքին իրենը : Ասանկ ընելով՝ տեղ չի կորսվիր ու գրելու բաները մէկ մէկու քով մօտ կուգան , և հաշիւն ալ դիւրին կըլլայ :

ԼԹ. () օրհանգիստին միջին բաները թէպէտ ամբողջ գրվելու են մայրհանգիստի գրքին մէջ՝ ամեն մէկ ապրանքին իր երեսը, սակայն նայելու է որ՝ որչափ կարելի է նէ համառօտ ըլլայ. քանի մը բառով հասկըցնես օրհանգիստին երկայն խօսքերը, որպէսզի ամփոփ ըլլայ:

ԼՃ. Մայրհանգիստի գրքին թղթահարմաները որ օրհանգիստին լուսանցքը գրված են (ի. ի՞), ու քովերնին մէյմէկ բարակ գիծ ունին, մէկը դէպ ՚ի ձախակողմը և մէկալը աջակողմը, կընշանակեն՝ թէ օրհանգիստին բաները անցած են մայրհանգիստի գրքը: Ասան զի աս գծերը հնարված են նշան ըլլալու համար՝ թէ որ հանգիստը անցած է, և որը չէ: Աստի սովորութիւն է գծել ան ատենը՝ երբոր մէկը օրհանգիստին բանը անցնելու ըլլայ Մայրհանգիստի գրքը:

ԼԷ. Արուճեակ մայրհանգիստի գրքին համառօտ խօսքերուն համար (ԼԹ) շատ անգամ պէտք կըլլայ օրհանգիստի գրքը նայել, կամ նոյն մայրհանգիստին մէջ մէկ ապրանքին հանգիստին մէկալ ապրանքին հանգիստին սրկել, ուստի հարկաւոր է ՊՁը նշանելու գաւազանին ներսի կողմը երկու բարակ գաւազան ալ գծել. մէկը օրհանգիստի գրքին երեսը ցուցնելու համար, մէկալը մայրհանգիստին. ինչպէս որ պիտի տեսնես ետևի օրինակիդ մէջ: Աւր գաւազանին վերի ծայրը գրված (), կընշանակէ () օրհանգիստին երեսը. և Ս, Մայրհանգիստի գրքին:

ԼԸ. Ամեն ըսածներս յայտնի օրինակով հասկըցնելու համար՝ վերի գրված օրհանգիստին բաները մէկիկ մէկիկ անցնենք մայրհանգիստի գրքին մէջ, զոր նորավարժը տեսնելով ու ինքիդէն բաղդատելով կընայ իմանալու սորվել կարգը և կանոնը մայրհանգիստին:

Մ Ե Յ Ր Տ Ե Շ, Ի Ի

1830

Տ Ե Ր Ի Ո Յ Ն

ՏԱԼԻՔ

		Օ	Մ	ԴՆ	Գր
1850					
Յանվար .	1	1	2	20000	—
	15	2	4	2250	—
	18	2	5	700	—
	28	3	8	112	60
	30	3	3	2100	—

ՏԱԼԻՔ

Օ	Մ	ԴՆ	Գր

Դ Ո Ւ Կ

1

ԱՌՆԵԼԻՔ

1850

			Օ	Մ	ԴՆ	Գ
3-1-1-1	2	Շաբարին սպրանքէն՝ ԴՆ, 2940, գին 1010, հօխային զոր ծախու առի	1	3	2940	—
		Նոյն սպրանքէն՝ ԴՆ, 15, խարճի համար	1	3	15	—
	5	Գահվէին սպրանքէն՝ ԴՆ, 7680, որ է գին 2000, հօխայ ծախու առած դահվէիս	1	4	7680	—
		Նոյն սպրանքէն՝ ԴՆ, 20, խարճ		4	20	—
	20	Թաշկինակին սպրանքէն՝ ԴՆ, 1500, վճարեցի կէս գինը 100, ծրարին, զոր ծախու առի	2	7	1500	—
	25	Բրնձին սպրանքէն՝ ԴՆ, 1400, գինը 2900, հօխայ բրնձին, զոր ծախու առի	3	8	1400	—
		Նոյն սպրանքէն՝ ԴՆ, 33, խարճ	3	8	33	—
	28	Թղթին սպրանքէն՝ ԴՆ, 3, խարճ	3	9	3	—
	30	Թաշկինակին սպրանքէն՝ ԴՆ, 1500, որ է մնացած կէս գինը 100. ծրարին, զոր վճարեցի	3	7	1500	—

Գ Լ Ո Ւ Խ

2

ԱՌՆԵԼԻՔ

1850

			Օ	Մ	ԴՆ	Գ
3-1-1-1	1	Մնդկէն՝ ԴՆ, 20,000 սը դրվեցաւ առուարի համար	1	1	20000	—

SULIՔ

1850		O	Մ	Կ.Է.	Պ	Գ
Յանվար 2	Առ սնդուկը՝ Պ, 2940, որ է դին ծախու առնված շաքարին	1	1	1010	2940	—
	Առ նոյնը՝ Պ, 15, խարճ	1	1		15	—

SULIՔ

1850		O	Մ	Կ.Է.	Պ	Գ
Յանվար 5	Առ սնդուկը՝ Պ, 7680, որ է դին ծախու առնված դահլիճին	1	1	2000	7680	—
	Առ նոյնը՝ Պ, 20, խարճ	1	1		20	—

Ա Պ Ր Ա Ն Ք

3

ԱՌՆԵԼԻՔ

1850			Օ	Մ	Կւէր	Պ	Գ
Յ.ն.վ.թ.	10	(Այս տարին) Պ, 700. գին ծախու առած շաքարին, զոր խոստացաւ ամսոյս 18, վճարել.	1	5	200	700	—
	30	Մնդկէն՝ Պ, 2100, գին ծախված շաքարին	3	1	600	2100	—

Ա Պ Ր Ա Ն Ք

4

ԱՌՆԵԼԻՔ

1850			Օ	Մ	Կւէր	Պ	Գ
Յ.ն.վ.թ.	15	Մնդկէն՝ Պ, 2250, որ է գին ծախված դահլիճին	2	1	500	2250	—
		Կտոււին ապրանքէն՝ Պ, 2250, գինը դահլիճին զոր փոխոց ըրի	2	6	500	2250	—

ՏԱԼԻՔ

1830		Օ	Մ	Կ.Է.	Պ	Գ
Յ. 10	Ա. շաքարին ապրանքը՝ Պ, 700, գին ծախու. առած 200, հոխայ շաքարին զոր պիտի վճարէ ամսոյս 18ին.	1	3	200	700	—

ՏԱԼԻՔ

1830		Օ	Մ	Ծ.Ե.	Պ	Գ
Յ. 15	Ա. դահլիճին ապրանքը՝ Պ, 2250. գինը 500, հոխային, զոր փոխոց ըրի 100, ծրար կտա ւի հետ	2	4	100	2250	—

Պ Ա Ր Ո Ն)

Ա Ռ Ն Ե Լ Ի Ք

1850		Օ	Մ	Կ շ ի մ	Պ Շ	Գ ի
Յ. Կ. Կ. 18	Մ ն գ կ է ն՝ Պ Շ - 700, գ ի ն 200, հ օ թ ա յ շ ա ք ա ր ի ն զ ր ր ա յ ս օ ր վ ճ ա ր է յ	2	1	200	700	—

Ա Պ Ր Ա Ն Ք

Ա Ռ Ն Ե Լ Ի Ք

1850		Օ	Մ	Ծ շ ի մ	Պ Շ	Գ ի

7

Թ Ա Շ Կ Ի Ն Ա Կ Ի

Տ Ա Լ Ի Ք

1850			O	Մ	Տ ր ր	Պ	Ի
Յ և Կ Ե ր .	20	Ա. սնդուկն՝ Պ, 1500, կէս գինը 100, ծրար Թաշկինակերուն, զոր աւի	2	1	50	1500	—
	30	Ա. նոյնը՝ Պ, 1500, գինը մնացած կէսին, զոր խոստացերէի այսօր վճարել	3	1	50	1500	—

8

Բ Ր Ն Ձ Ի

Տ Ա Լ Ի Ք

1850			O	Մ	Կ է ւ	Պ	Ի
Յ և Կ Ե ր .	25	Ա. սնդուկն՝ Պ, 1400, գին ծախու առած բրնձիս	3	1	2900	1400	—
		Ա. նոյնը՝ Պ, 33, խարճ	3	1		33	—

9

Թ Ղ Թ Ի

Տ Ա Լ Ի Ք

1850			O	Մ	Կ ւ ր ր	Պ	Ի
Յ և Կ Ե ր .	28	Ա. բրնձին սպրանքը՝ Պ, 112:60, որ է գին 150, հովնայ բրնձի, զոր փոխեցի Թղթի հետ	3	8	60	112	60
		Ա. սնդուկը՝ Պ, 5. խարճ	3	1		3	

Ա Պ Ր Ա Ն Ք

7

1830

ԱՌՆԵԼԻՔ

Օ	Մ	Ծրբ	Պ	Կի

Ա Պ Ր Ա Ն Ք

8

1830

ԱՌՆԵԼԻՔ

Յ. Կ. Կ. 28

Մեղկէն՝ Պ, 112:60 գին ծախած բրնձիս.

Թղթին ապրանքէն Պ, 112:60 գին բրնձին զոր փոխեցի Թղթի հետ.

Օ	Մ	Կիւ	Պ	Կի
3	1	150	112	60
3	9	150	112	60

Ա Պ Ր Ա Ն Ք

9

1830

ԱՌՆԵԼԻՔ

Օ	Մ	Կիւ	Պ	Կի

ԼԿ. Ս երբ Սայրհաշուին մէկ ամսական բաները, զոր քաղեցինք ()ըհաշիւ գրքէն, ու ամմէնն ալ իրենց առանձին երեսներուն մէջ տեղաւորեցինք, կրնայ իմացնել նորավարժին՝ Թէ ետեւէ ետեւ մէկալ ամիսներն ալ ասոնց նման ըլլալու են, նոյն կարգը և նոյն կանոնը պահէլով ամմէն տեսակ առուտրի մէջ՝ ինչպէս տալին ամբողջ ըմբնայ :

ԼԿ. (Թէ որ Սայրհաշուին միջի գրած բաներուդ երեսին մէկը Լեցվի նէ, անտտենը երկու երեսին հաշիւն ալ միատեղ գոցելու է, և ուրիշ երես խրկելու է . ինչպէս պիտի սորվեցընենք վարը (Թիւ , ԼԿ) :

ԼԸ. (Թէ որ կուզես Սայրհաշուին մէկ մասը գոցել, առաջ տալիքին կողմի հաշիւը վերէն ՚ի վար ժողվէ, ու զգումարը գաւազանին տակը գրէ : Ատքը առնելիքին կողմի հաշիւն ալ անանկ ըրէ, ու անորն ալ իր գաւազանին տակը գրէ : (Թէ որ երկու երեսին գումարները մէկմէկու հաւասար ելան նէ, ինքնիրէն կըգոցվի ու կըլըմնայ հաշիւը : Այլա Թէ մէկը շատ, և մէկալը քիչ ելայ նէ, պէտք է քիչը շատէն հանել, ու եւեցածը՝ եթէ տալիքին գին է, գիտցիր որ շահ ունիս . իսկ եթէ առնելիքին, փասս : Ուստի երկու երեսին գումարները մէկմէկու հաւասարցնելու համար եւեցած Թիւը զարկ պզտիկ գումարին վրայ, որով երկուքն ալ կըհաւասարին :

()ըինակի համար դնենք աս տեղը սնդկին հաշիւը, որ Սայրհաշուին 1, երեսն է

Ս Ն Դ Ո Ւ Կ

ՏԱԼԻԲ .	Պ անի	ԱՌՆԵԼԻԲ .	Պ անի
	20000 : —		2940 : —
	2250 : —		15 : —
	700 : —		7680 : —
	112 : 60		20 : —
	2100 : —		1500 : —
Գումար .	<u>25162 : 60</u>		1400 : —
			33 : —
			3 : —
			1500 : —
		Գումար	15091 : —
		Տալիքէն եւեղածը . .	10071 : 60
		Հաւասարեցաւ տալիքին .	<u>25162 : 60</u>

Օ այս գործողութիւնը ընելով՝ առնելիքը տալիքին հետ կը հաւասարի, ու գոցվելով երեսը՝ կիմանաս որ սնդկին մէջ 10071 . Պ 60 սնդկ կայ . ուստի թէ որ ուզենաս զայն հաշիւը նոր երես մը տանիլ, զեւեղած համրանքը ա՛ռ ու տար, դիր ձախակողմը նոր երեսին, և հոն սկսէ գրել ետքի առուտուրները : Շատ վաճառականներ՝ ամսրվան վաստակնին իմանալու համար, սովորութիւն ունին ամսէ ամիս ընելու զաս գործողութիւնը :

ԼԹ . Մտոր նման կուզես իմանալ՝ թէ շաքարին ապրանքէն, որ Մայրհաշուին 3, երեսն է, որչափ ծախերես և որչափ կայ ծախելու, ժողվէ՛ տալիքին և առնելիքին հաշիւները՝ հանդերձ կշեռքովը, այսպէս :

Հ Ա Ք Ա Ր Ի Ա Պ Ր Ա Ն Ք

ՏԱԼԻՔ •	Այլ-••	ՊՁ «ի՛	ԱՌՆԵԼԻՔ •	Այլ-••	ՊՁ «ի՛
	1010 :	2940 : —		200 :	700 : —
		15 : —		600 :	2100 : —
		<hr/>			<hr/>
	1010 :	2955 : —		800 :	2800 : —
		<hr/>		210 :	155 : —
		<hr/>			<hr/>
			Տալիքէն եւեցածը •		
			Հաւասարեցաւ տալիքին •	1010 :	2955 : —
				<hr/>	<hr/>

Ընդհանրապէս ընկերութիւններու որ շաքարին ապրանքը 1010, հոխայ՝ որ եղերէ քեզի 2955, ՊՁ, ծախվերէ 800, հոխայն 2800, ՊՁով, ու մնացերէ դեռ ծախելու 210, հոխայ, որ կաժէ քեզի 155, ՊՁ, ուստի մեծ վաստակ ունիս աս ապրանքիս մէջ: Եթէ ամէնն ալ ծախելու ըլլաս նէ, պիտի գիտնաս որ՝ եղած վաստը կին թէպէտ մեծ մասը աւելի գնով ծախելէն է, սակայն 90, ՊՁ ալ կայ մէջը, որ ծախու առած ատենդ շահերես (Ե), այսինքն՝ 60, ՊՁ հարիւրին երկուք վար զարնելով, և 30, ՊՁ ալ մնդկին տարայէն, որ տա սը հոխայ պակաս կը ելելով՝ շաքարը եւեցաւ: Օ աս բոլոր շահերը տանելու է ան հաշուին մէջ, որ կըսվի * Հաշիւ շահու և փաստու ॥ (խդ):

Ին. Արեւելիս իմանալ թէ գահվէին ապրանքէն, որ Սոյրհաշուին 4, երեսն է, ինչ ծախվեր, ինչ մնացեր ու ինչ պտուղ բերերէ քեզի, ասանկ ըրէ:

Գ Ա Հ Վ Ե Ի Ա Պ Ր Ա Ն Ք

ՏԱԼԻՔ.	Կշեռք.	ՊՁ սրի	ԱՌՆԵԼԻՔ.	Կշեռք.	ՊՁ սրի
	2000 :	7680 : —		500 :	2250 : —
		20 : —		500 :	2250 : —
	<hr/>			<hr/>	
	2000 :	7700 : —		1000 :	4500 : —
	<hr/>			1000 :	3200 : —
			Տալիքէն եւեղածը . .	<hr/>	
			Հաւասարեցաւ տալիքին .	2000 :	7700 : —
				<hr/>	

Ըսով կիմանաս՝ թէ 2000, հօխայ ծախու առած գահլէիդ, որ տված էիր 7700, ՊՁ, ծախվերէ 1000, հօխայն, 4500, ՊՁով, ու մնացերէ 1000, հօխայ, որ կաժէ քեզի 3200, ՊՁ. եթէ զայն ալ ծախելու ըլլաս նէ նոյն գնով, կըբերէ քեզի շահ, 1300, ՊՁ:

Խն. Կուզես իմանալ՝ թէ (այս անոն պարոնը), որ Սայրհաշուին 5, երեսն է, ինչ առուտուր ըրերէ հետդ, բաղդատէ տալիքը և առնելիքը այսպէս :

(Ա Յ Ս Ա Ն Ո Ի Ն Պ Ա Ր Ո Ն)

ՏԱԼԻՔ.	ՊՁ սրի	ԱՌՆԵԼԻՔ.	ՊՁ սրի
	700 : —		700 : —
	<hr/>		<hr/>

Ըսով կիմանաս՝ թէ տալիքը հաւասար ըլլալով առնելիքին հետ, լրմնուցերէ իր հաշիւը : Ս ան զի ինչ ապրանք որ առերէ նէ՝ գինը տված է. ուստի ինքիւրէն կըգոցվի աս հաշիւը (ԼԻ) : Լը գոցելու նշանը տակի հաստ ու բարակ գիծն է :

խք. Առգետ իմանալ կտաւի ապրանքին վրայով, որ Մայրհաշուին 6, երեսն է, թէ ինչ առուտուր եղած է: Արտեսնես որ տալիքին մէջ գրված է՝ թէ փոխոցով ծախու առի ու տվի 72, 2250 —: Իսկ դիմացը առնելիքին մէջ գրված բան չկայ, պիտի իմանաս՝ թէ այս ապրանքէն դեռ չէ ծախված:

խդ. Առգետ իմանալ թէ լծակինակի ապրանքը, որ Մայրհաշուին 7, երեսն է, ինչ գնով եղերէ քեզի, ու բան մը ծախված է: Արտեսնես որ տալիքին մէջ գրված է, թէ ծախու առերես ու գինը երկու անգամով վճարերես 72, 3000, բայց առնելիքին կողմը գրած բան չըլլալով՝ պիտի իմանաս որ դեռ չէ ծախված:

խե. Առգետ իմանալ թէ բրնձին ապրանքը, որ Մայրհաշուին 8, երեսն է, ինչ գնով եղերէ քեզի, և որչափ ծախերես: Երկու երեսին գրվածքը այսպէս:

Բ Ր Ն Ձ Ի Ա Պ Ր Ա Ն Ք

Տ Ա Լ Ի Ք .	Ա ջ ր ր .	72	ս ր է	Ա Ռ Ն Ե Լ Ի Ք .	Ա ջ ր ր .	72	ս ր է
	2900 :	1400 :	—		150 :	112 :	60
		33 :	—		150 :	112 :	60
	<hr/>				<hr/>		
	2900 :	1433 :	—		300 :	225 :	—
	<hr/>			Տ ա լ ի ք է ն ե ւ ե ջ ա ծ ը . .	2600 :	1208 :	—
				Հ ա ւ ա ս ա ր ե յ ա ւ տ ա լ ի ք ի ն .	2900 :	1433 :	—
					<hr/>		

Ի՞նչ կերևնայ որ 2900, հոխայ բրնձին տվերես 1433, 72, ու ծախերես 300, հոխայն 225, 72ով, Եւստի ունիս ծախելու 2600, հոխայ, որոյ գինը կըլլայ քեզի 1208, 72: Արնաս իմանալ՝ թէ մնացածն ալ նոյն գնով ծախելու ըլլաս նէ, ինչ պիտի վաստկիս:

խԵ. Արևգես իմանալ թէ թղթին ապրանքը, որ Մայրհաշուին 9, երեսն է, ինչով եղերէ քեզի, կը-տեսնես որ տալիքին երեսը գրված է, թէ 60, կապոց թուղթը առերես փոխոցով 112, 70. 60, ստիկ, ու 3, 70 ալ խարճ ունիս. որով ապրանքը եղերէ քեզի 115, 70 և 60. ստիկ: Իսկ առնելիքին կողմը ամենևին բան չիկայ, որ ըսել է՝ թէ չէ ծախված, ուստի պէտք է անանկ թողուլ ինչվան որ ծախվի:

խԶ. Թէ որ ունեցած ապրանքներուդ մէկը ըմնցաւ, ու այլ չիմնաց ծախելու նէ, անոր հաշիւը գո-ցելու է. ու անկէց եղած շահը կամ փաստը տանելու է նոր երես մը Մայրհաշուին մէջ. դնելով զայս վեր-նագիրը. * Հաշիւ շահու և փաստու ॥: Ըստ երեսին տալիքին կողմը գրելու է ամմէն ապրանքէն եղած վաս-տակը. և առնելիքին կողմը՝ եղած փաստը, ամմէն ապրանքին իր անունովը, որով իմացվի ուսկէց վաստակ եղերէ և ուսկէց փաստ:

Ըստ երեսին բաները որովհետև Մայրհաշիւ գրքէն կը բաղվին, անոր համար () րհաշուին մէջ պէտք չէ նշանել. բայց ետքը հաշուեգրքին տարեկան Աշուք ընելու ատենը՝ երկու երեսին հաշիւներուն գու-մարը հանէ իրարմէ (լ Ե), և ինչ շահ որ մնայ, տար գիր Վրամագլխուն տակը, որով կիմացվի ըրած վաս-տակդ ու Վրամագլխուդ եւե՛նալը:

խԷ. Ա երի ըսածներովս կրնայ նորավարժը բաւականապէս իմանալ մայրհաշիւ գրքին կարգը ու կա-նոնը, և թէ ինչպէս պէտք է գրված հաշիւները ժողվել ու ապրանքին շահը կամ փաստը իմանալով գոցել զայն հաշիւը: Մնաց որ եթէ կուզէ մէկը գիտնալ թէ ընտրը կըլայ հաշուեգրքին տարեկան կշեռք ընել, զայն ալ ցուցնենք համառօտ խօսքով:

Կ Շ Ե Ռ Վ Ք

խը. Տարին ամբողջ առուտուր ընելէն ետքը, երբոր կուզես խմանալ թէ առածդ տվածդ ինչ վաստակ կամ փասս ըրերեն, պէտք է որ մտղկին և ամիէն ապրանքներուն հաշիւը գոցես (լք) ու անոնցմէ եւելցածը ժողվես առանձին առանձին, ու տանելով մէկ նոր երես մը՝ դնես դիմացէ դիմաց, որով երեսնայ տարեկան շահդ կամ փասսդ: Այս հաշուեմասը կըսվի Աշեռք. զոր թէ ինչպէս ընելու է նէ ցուցնենք օրինակով:

խթ. Գնենք թէ 1830, տարին Յունիվարի մէկը ունենալով 20,000, ՊՊ դրամագլուխ, ինչպան Գեկտեմբերի վերջը՝ շատ տեսակ ապրանքներ առիր ու ծախեցիր, մէկէն վաստակ ըրիր նէ՛ մէկալէն փասս կամ մէկին փոխ տվիր, և կամ փոխ առիր, նմանապէս խարճեցիր առուտորիդ պատճառաւ, և կամ տանդ ապրուստին համար: Ասոնց ամիէնուն հաշիւը գոցելէն ետքը Սայրհաշուին մէջ, անոնցմէ եւելցածները տար շարէ: Տալիքին կողմը դիր դրամագլուխդ ու առուտրէն եղած վաստակները. իսկ Ասելիքին կողմը դիր ունեցած ապրանքներդ, մտղկին ստակը ու ըրած խարճերդ. թէ որ տալիքին հաշիւը առնելիքին հաւասար ելէ, շիտակ է կշեռքդ: () րինակի համար դնենք աստեղը համարուօտ հաշիւ մը:

Ծ. Սեպելով թէ 20,000 ՊՊ դրամագլուխդ Իզմիրու մէջ առուտուր ընելով շատցուցերես ինչպան 46000, ՊՊ: Այս քառասունըվեց հազար ՊՊին 5000ը, կտաւի ապրանք է. 3000ը, գահվէի. 5000ը, շաքարի. 3000, թղթի. 3000, թաշկինակի. 15000ը, մտղկիդ մէջ ճերմակ ստակ. 4000ը, փոխ (այս անուն պարսկէն) քով. 2000ը, առուտրիդ խարճ. 6000, ալ տանդ խարճը: Օսոնք ամիէնը կարգաւ շարէ՛ դրամագլուխդ դէմը այսպէս:

ԿՂԵՌՔ ԻԶՄԻՐՈՒ ԱՌՈՒՏՐԻՍ

1830


Պետ. 31 :

ՏԱԼԻՔ

Պետ. 31 :

ԱՌՆԵԼԻՔ

Ղ. դրամագլուխն Յունվարի, 1 . . .	20000	—
Ղ. նոյնը՝ ունեցած ապրանքս և բոլոր տարվան ըրած շահս	26000	—



Կտաւի ապրանքէն	5000	—
Պահչլէի ապրանքէն	3000	—
Շաքարի ապրանքէն	5000	—
Թղթի ապրանքէն	3000	—
Թաշկինակի ապրանքէն	3000	—
Մնդկէն ճերմակ ստակ	15000	—
(Ղ. անոն պարոնէն) փոխ	4000	—
Ղուտորի խարձէն	2000	—
Տանս խարձէն	6000	—

46000 : —

46000 : —

ծն. Ղ. և կշեռքէն կիմանաս որ առուտուրը սկսված է 20,000, ՊՇով, ու վաստկեր եւեցուցերես 26000, ՊՇալ վրան. ուստի բոլոր ունեցածդ եղերէ 46000, ՊՇ, զոր Լազմիրու առուտուրդ պարտկան է կամ տալիք ունի քեզի: Իսկ թէ աս տալիքներուն ստակը ուր է, և ինչ բանի վրայ պառկած, կամ ուր խարձը ված, կերևնայ դիմացի երեսը, ուր գրված է Ղ. անելիք. և անոր ներքևը նշանված, թէ կտաւի ապրանքին վրայ կայ 5000, ՊՇ: Պահչլէի ապրանքին՝ 3000, ՊՇ: Շաքարի ապրանքին՝ 5000, ՊՇ, նմանապէս մէկ կալունց վրայ. որով կիմանաս թէ ինչ ապրանքի և որչափ ստիկ տէր ես: Լա թէ ըրած խարձերդ ելած 5*

են վաստակներէն , ուստի թէ որ զանոնք ալ հանելու ըլլաս նէ ունեցած ըստկէդ , կրմնայ ձեռքդ ապրանք
և ըստակ 38000 , 170 , որոյ 20,000ը , առջի դրած ըստակդ է , և 18000 , 170ը աս տարվան շահդ :

ԾԷ . Սնաց որ՝ եթէ կշեռքին մէջ քանի մը 170 , եւեւ կամ պակաս դայ նէ , մեծ բան մը չէ . բայց
երբոր տեսնես թէ շատ է փնասը , գիտցիր որ մեծ կորուստ ունիս , կամ փորձանքի մը գալով , կամ առու-
տուրդ աղէկ չընելով , և կամ խարձիդ չգիտնալով : Թէ որ դիպուածով փորձանքի եկերէ մէկը , կրնայ
անմեղադրելի ըլլալ . իսկ եթէ առածը տվածը չէ գիտցեր , պէտք է որ շուտով դեղը մտմտայ . հապա թէ
չափէ դուրս խարձելով փնասվերէ , նայի պիտի որ անոր ալ կարգ դնէ . թէ չէ՝ օրէ օր պարտքը շատնալով ,
ծարը չիկրնար բերել ու կոտր կըլնի : Եւ որպէս զի նորավարժը գիտնայ այսպիսի վտանգներէն զգուշա-
նալը , մէկ քանի հարկաւոր խրատներ դնենք գրքիս վերջը :

Խ Ր Ա Տ Բ Ա Ռ Ի Ո Ր Ա Վ Ա Ր Ժ Ս

ԾԸ . Արովհետև հիմակվան աշխրբիս վաճառականութիւնը շատ տարբեր ու դժար է քան զհին ատեն
ներուն , ուստի պէտք է վաճառականին շատ բանի տեղեակ ու հմուտ ըլլալ , որպէս զի բաց յաւանձին իր
շահէն՝ կարենայ ազգին ալ օգտակար ըլլալ , իր ազգին պատիւնաւ եւեցնել օտար ազգաց առջևը : Բա-
ւական չէ որ գիտնայ կշեւ , չափել , հաշիւ ընել , առուտորի մէջ կարելի դիպուածները մտածել , գիտնալ
ինչէն ինչ ելլելիքը , ծովու և ցամաքի վտանգներէն զգուշանալը , ամմէն տեսակ ըստկներուն ճանչնալը
ու իրենց արժէքը , և այլ ասոնց նման գիտելիքներ . այլ և պիտոր տեղեակ ըլլայ իր ատենին սովորու-
թեանցը , օրէնքներուն , կարգի կառավարութեանց , զանազան ազգի բնութեան և յօժարութեանը . և
թէ որ ապրանքը որ խրկելը , կամ ուսկէց բերել տալը աւելի շահաւոր կըլլայ . որպէս զի առուտորի ձեռք
զարնելու ըլլայ նէ՝ գիտութեամբ գործէ , և ոչ դիպուածով : Բնած տեղեկութիւններս հարկաւոր են չէ
թէ միայն վաճառականներու , այլև խանութպաններու և արհեստաւորաց , որպէս զի գիտնան իրենց ապ-
րանքը և գործքը յարմարցնել ատենին , քաղքին սովորութեանը , նորեկուք կարգերու , մարդկանց յօժա-

րու թեանը, որով արհեստը կը ծաղկի և իրենց աշխատանքը անպտուղ չի մնար. աղէկ վաստակալ կունենան :
 ԾԴ. Ղուուտրին վախճանը կամ թէ ըսենք դիտմունքը, շահն ու վաստակն է, որով մարդիկ կը ջա-
 նան էտեւէ կը յնին իրենց պէտքը և կարօտութիւնը լեցունելու : Սակայն շահ ըսված բանը՝ գլխաւորաբար
 ան քաղքին է ուր կը լլայ առուտուրը . և երկրորդաբար առուտուր ընողին : Վաղքին շահը՝ իր մեծու-
 թիւնը և շինութիւնն է, այնչափ աւելի մեծանուն կը լլայ քաղքը ու կը ծաղկի, որչափ շատ ու երևելի
 վաճառականներ ունենայ, որ կը սեպվին քաղքին հարստութիւնը : Իսկ առուտուր ընողին շահը ան է որ՝
 մարդ իր վաստկով հանգիստ և ուրախ ապրելէն ետքը, կարօտներուն ալ օգնութիւն հասնի . որ մարդ-
 կային ու քաղաքական կենաց հարկաւոր կատարելութիւն է :

ԾԵ. Ղուուտրին վաստակը ան ատենը աղէկ ու գովելի է, երբոր մէջը անիրաւութիւն մտած լլայ :
 Ինչ և իցէ վաստակ՝ եթէ արդարութենէ դուրս է, անիրաւ է . վաստկին չափը, կշեռքը և կանոնը արդա-
 րութիւնն է, ուստի որչափ որ մէկը իր շահը կը մտմտայ, այնչափ ալ ուրիշի վնաս տալէն պիտոր զգուշա-
 նայ : Եթէ մարդ իր շահը մինակ մտածելով ամմէն օգուտ իրեն քաշելու լլայ նէ, կշեռքին հաւասարու-
 թիւնը չի պահեր, արդարութենէ ալ դուրս կելլէ : Իրաւ է որ ատեն ատեն զանազան դիպուածներով
 ապրանքներու գինը կեւեւնայ ու կը պակսի, ուստի աչքաբացութիւնը հարկաւոր է վաստակ ընելու . սա-
 կայն առուտուր ընողը՝ ամմէն դիպուածի մէջ արդարութեան կանոնէն պիտոր չի հեռանայ . միշտ նայելու
 է մանաւանդ հասարակաց բարիքը և օգուտը քան իր առանձնական շահը : Եւ աշխատանքին պտուղը անուշ
 կը լլայ՝ եթէ արդարութեամբ և իմաստութեամբ հասուննայ :

ԾԶ. Ստիկին յարգը (իւրյմէթը) չի գիտցվիր սնդկի մէջ գոցելով կամ պահելով . հապա խելքով ու գի-
 տութեամբ բանեցնելով : Վանանչ ծառ մը որչափ գեղեցիկ տերեւներով զարդարված լլայ՝ երբոր պտուղ
 չի բերեր, անպիտան կըսվի : Իսկ որ կուզես ստիկի պտուղը տեսնել ու վայել, ջանա որ բու ձեռքովք բա-
 նեցնես . օտարին ձեռքը որչափ ապահով լլայ, մարդուն իր ձեռքէն ապահով չէ : Եւ որպէս զի կարե-
 նաս ստակդ դուն բանեցնել, պիտի գիտնաս շահու կամ վաստկին ճամբան . որ ուրիշ բան չէ, բայց եթէ
 գիտնալ կարգը և կանոնը շահավաճառ լլայլու, որ առանձին գիտութիւն է, ու չի սորվվիր առանց աշ-
 խատութեան և աշակերտութեան :

ԾԷ. Ղուստուրը թէպէտ ստիով կըլլայ, սակայն խելքով կըդառնայ: Իսկ խելք բանեցնելու գործ-
քերը առուտրի մէջ ասոնք են: Վիտնալու է, թէ ստակը ինչ ապրանքներու վրայ պիտի պառկի. որ ատեն
ծախու առնելու է. և ինչպէս ծախելու. ծախու առնելու ատենդ մի աւտար ուրիշ խօսքին կամ աչքին.
դուն գնա վրան կեցիր, քննէ, իմացիր ապրանքին ինչ ըլլալը, գինը, կշեռքը, չափը ու այնպէս առ. որ
պէս զի կարենաս վտաճ ըլլալ առած ապրանքիդ վրայ, թէ ստակդ ստիկ հետ փոխերես ու չես խաբւած,
ուստի հանգիստ սրտով ալ կրնաս եւելօք ծախել ու շահիլ: Ի՞նչ որ ապրանք առնելու ատեն շատ աշխա-
տերես, ծախելու ատեն քիչ կըՏոգնիս. վասն զի աղէկ ապրանքը երբոր է նէ ստակ է:

ԾԸ. Սաճառականութեան ձեռք զարնօղը պիտոր ըլլայ չափաւոր ըստի ալ տէր. որպէս զի առու-
տրի մէջ համարձակ ըլլայ, թէ իր ունեցած առանձին ըստիովը կրնայ դիպուածական փորձանքի կամ տա-
լիքի դէմ գնէլ, որ օտարի վնաս մը չհասնի: Սիտնդամայն կարենայ իր ըստիին և աշխատանքին պտուղը
վայլել. թէ չէ՞ պարտքով կամ մինակ փոխ ըստիով առուտուր ընօղը իր շահը ու աշխատութիւնը օտա-
րին կըկերցնէ:

ԾԹ. Ինչ ապրանք որ ծախու կառնես՝ բայց 'ի գնոյն որ վճարեցիր, նոյն ապրանքին համար եղած
խարձերն ալ պէտք է զարնել գնոյն վրայ, սեպելով թէ ապրանքին բոլոր գինը եղած է այսչափ: Օ՞ր
օրինակ՝ թէ որ հարիւր 700 աւեր ապրանք մը, ու վրան ալ հինգ 70 խարձեցիր, պիտոր ըսես թէ գինը
եղաւ 105, 70:

Կ. Օ՞րնչ և իցէ ապրանք խանութիդ մէջը թէ որ շատ ժամանակ մնալու ըլլայ առանց ծախվելու,
գիտցիր որ քու ընելու շահդ ինք կուտէ. վասն զի ստակդ անպտուղ պառկելով ապրանքին վրայ, կըզրկէ
զքեզ ընելու շահէդ. ուստի պիտի նայիս անանկ ապրանք առնելու, որ քովդ շատ չիպառկի: Օ՞յն ապ-
րանքներն որ կրնան վաթիլ, կամ մնալով հոտիլ, կամ պակսիլ, կամ աւրիլ, կամ ցեցոտիլ, ջանա՞ որ
շատ չիպահաս. այլ աղէկ առիթ մը գտնես նէ չափաւոր շահով ծախէ:

Կա. Իյելացի վաճառականը իր ամեն բանը ողջ կըբռնէ. թէ տալիք է եղեր և թէ առնելիք հաստա-
տուն բանի վրայ կըկապէ: Որովհետեւ մարդիկ մահկանացու ենք՝ թէ որ մէկին ստակ կամ ապրանք տա-
լու ըլլաս նէ, ձեռքէն թուղթ մը առ տվածդ ապահովցնելու համար. միամտութեամբ մի համարձակիր

և մաւտար մարդու, թէպէտ և եղբայրդ ըլլայ. վասն զի վաճառականութեան կարգը և կանոնը կրպահանքն որ բաներդ ողջ բռնես, որպէս զի ետքը չիցաւիս, չամչնաս, չջիւթիս և չիջնասվիս:

կԸ. Ս՝ աճառականութիւնը ծածուկ ու բարակ արհեստ է, զոր սորվելու համար պէտք է ունենալ յօժարութիւն, աչքաբացութիւն, ուշադրութիւն, ջանք և աշխատութիւն առանց ձանձրանալու: Պիտի գիտնայ առուտուր ըրած ապրանքներուն ինչ ըլլալը, ինչպէս ըլլալը, ուսկէջ ելլելը, ինչ ճամբով բերել տալը, որ ատեն ծախելը, և ատենին նայելով ինչ շահ բերելը: Օ՛րսոնք աղէկ սորվելու համար պիտոր աշխատի, չէ՛ թէ մինակ գրբի մէջ կարդալով, այլ և տեսնելով ու ատեն մալ աշկերտութիւն ընելով երևելի վաճառականի մը քով, որով աչքը կըբացվի, ու առուտրի ճամբան կըսորվի:

կԹ. Ս՝ աճառականին մեծ ապրանքը ու ստակը պիտոր ըլլայ իր բարի անունը: Իսկ բարի անուն հանելու պէտք է ըլլալ արդար, հաւատարիմ, ճշմարտախօս, բարեսիրտ և քաղաքավար: Սուտի սուտ զրուցել, մարդ խաբել, սուտ թուղթ շինել, անիրաւ վաստկի էտեէ ըլլալ, ուրիշի ապրանքին աչք տնկել կամ վաստակը խափանել, մինակ իր շահը մտմտալ՝ մեծ վնաս է առուտուր ընողին: Մյնպիսին թէպէտ և շատ ստակ ունենայ, շուտով կըկորսնցնէ, վասն զի չարութիւնը և խարդախութիւնը անկարելի է որ ծածկվի, հերիք է մէկը իմանայ, մէկէն մէկալը անցնելով ամիշնն ալ կիմանան ու կըխցնեն զինքը: Թ՛ող որ խարդախ մարդուն գլխաւոր թշնամին ան է, որ չիտար այնպիսւոյն յաջողութիւն:

կՊ. Պատուաւոր վաճառականը որչափ որ կընայի իր առնելիքները ողջնցնելու, այնչափ ալ պիտոր ջանայ իր տալիքները վճարելու. մանաւանդ զայն պարտքերը, որ ամսով և օրովը խօսք կամ ձեռագիր տվերէ: Եթէ պակսի իր խոստմունքն, կամ օրէ օր ձգէ, կամ կիսկատար վճարէ, կամ խառնակ ըստըկնելով, իր անուանը և պատուոյն վնաս կըբերէ: Մտր համար խելացի վաճառականը չափելով իր ուժը և կարողութիւնը չիմտներ անանկ մեծ պարտքերու տակ, որ ետքը չկարենայ կատարել:

կԵ. Մշտեքիս մէջ փորձըլած բան է, որ առուտրի հետ եղողը չիկրնար միշտ յաջողութիւն ունենալ, այլ մարդուն կենացը մէջ բանի մը հեղ միայն կըպատահի առատ յաջողութիւն, զոր թէ գիտնայ բռնել ու չիկորսնցնել, անով կրնայ շահիլ ու շուկել իր բաղգը և մեծութիւնը: Սակայն զաս ալ պիտի գիտնայ, որ հարստութեան ցեցը մարդուն անհոգութիւնն է և առանց մտածութեան խարձելը. թէ որ

յաջողութեան հանդիպեցար՝ մի սեպեր թէ միշտ անանկ կըմնաս . զի բաց 'ի յանհամար փորձանքներէն կրնայ ևս ըլլալ որ տարիով առուտուր չընես , և պատրաստ գտված ստիկներէդ ուտես , ուստի եթէ խարձիդ չսփ չիդնես՝ շուտով կըհատնի վաստակդ ալ ու ասորանքդ ալ :

ԿԴ. Ինչ և իցէ արհեստ կամ առուտուր՝ ունի իր ձախորդութիւնը . անոր համար բանի գործքի վրայ եղողը պէտք է միշտ արթուն կենայ՝ չիվախնայ դիպուածական փորձանքներէն , որ անպակաս են աշխրքիս մէջը . հերթէ է թէ մարդ իր կողմանէ անհոգութեամբ կամ անզգուշութեամբ պատճառ տված չըլլայ եկած փորձանքին : Ուստի եթէ անկարծելի ձախորդ դիպուած մը կամ մնաս հանդիպի , տակն ու վրայ ըլլալով յուսահատելու չէ . այլ հանդարտութեամբ և զգաստութեամբ ամեն կարելի ճարը ինքն իրեն մտածելէն ետքը , երթալու է խելացի ու բարեկամ մարդիկներէն ալ խորհուրդ և խրատ խնդրելու : Եթէ երկու կամ իրեք մարդու տված խորհուրդը համաձայն ելլէ իրարու , խոհեմութիւնը կըցուցնէ զայն խրատը բռնելու , և աչքաբացութեամբ 'ի գործ դնելու : Սակայն զաս ալ գիտնաս որ՝ ոչ խորհուրդը , ոչ խրատը և ոչ մարդկային աչքաբացութիւնը կօգտէ , եթէ չըլլայ անձային յաջողութիւնը , որ լուսատու է և առաջնորդ մեր ամեն գործոցը : Ի՞նչ կ'մտքդ դիր զաս ճամարտութիւնը , թէ աշխրքիս մէջ ամեն փորձանք՝ մէկ խրատ մնէ , և քանի որ ողջ է մարդս՝ ոչ փորձանքը կըպակսի , և ոչ խրատը . ուստի անմնաս խալըսելու համար ամեն փորձանքէն , պէտք է անպակաս դիմել առ անձ ապակինելով իր խնամօցը և պահպանութեան , ու անդադար աղօթել . * Ս'ի տանիր զմեզ 'ի փորձութիւն , այլ փրկեա 'ի չարէ ॥ :

|| Կճառատէրդ՝ աղէկ շահիլ՝ Թէ որ կուզես ,
դիր քեզ կանոն՝ որ զառուտուրդ՝ չի խարդախես .
շիտակ խօսէ՝ ըզգաստ կեցիր՝ լեր հեռատես ,
խոհեմ՝ մտքով՝ պարկեշտ վարքով՝ արդարոց պէս :

|| Ընուշ վարվիս՝ ամենուն հետ՝ քաղցր սիրով ,
զգոյշ արթուն՝ երկայնամիտ՝ աննենգ սրբտով .
ուսումնասէր՝ ու գործունեայ՝ և ժիր հոգևով ,
գրել ստեպ՝ համբել անխոնջ՝ հաշիւն է ծով :

|| Կրանք գնել՝ մի՛ արտորար՝ ինչվան քննես ,
բայց ծախելու՝ մի՛ հեղգանար՝ Թէ գին գտնես .
յաջողուԹիւն՝ ՚ստուած կուտայ՝ Թէ դուն խնդրես ,
կենացրդ մէջ՝ մինակ իրեն՝ յոյսըդ դընես :

* Հասկաճառ մեծ ԹճպաշտուԹիւն է՝ բաւականուԹեամբ հանդերձ || : (Թ . Տիմ . Է . 6) :

Յ Ե Ն Ա

Ծանուցում	3
Հարկաւոր կանոններ	5
Յիշատակարան	7
Օրհաշիւ	15
Մայրհաշիւ	22
Սեռք	36
Խրատք առ նորակարծս	38

